ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ - ԲԵՌԼԻՆ
BOTSCHAFT DER REPUBLIK ARMENIEN - BERLIN

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Լրագրողներ առանց սահմանների» միջազգային ոչ կառավարական կազմակերպությունը (Reporters Without Borders) հրապարակել է 2013թ. զեկույցը՝ 179 երկրներում մամուլի ազատության վերաբերյալ:

Տարածաշրջանում լավագույն ցուցանիշը գրանցել է Հայաստանի Հանրապետությունը, որի միջազգային վարկանիշը բարելավվել է երեք կետով, ինչը թույլ է տվել նրան զբաղեցնել 74-րդ հորիզոնականը:

Հայաստանի հարևան երկրներից Վրաստանը ցանկում զբաղեցնում է 100-րդ, Թուրքիան՝ 154-րդ, Ադրբեջանը՝ 156-րդ, իսկ Իրանը՝ 174-րդ հորիզոնականը:

Հայաստանի կառավարությունը և քաղաքացիական հասարակությունը, դրական գնահատելով գրանցված առաջընթացը, գիտակցում են երկրում մամուլի ազատության հետ կապված դեռևս առկա խնդիրները և կշարունակեն իրենց ջանքերը՝ այն բարելավելու ուղղությամբ:

Բեռլին, 31-ը հունվարի, 2013թ.

Գերմանիայում ՀՀ դեսպանություն

Նուսբաումալեե 4, 14050 Բեռլին Nussbaumallee 4, D – 14050 Berlin
Tel.: 0049 30 405091 -0 (-20), Fax: 0049 30 40509125
Bankverbindung: Commerzbank Berlin, Konto Nr.: 260757000, BLZ: 100 400 00
Internet: www.germany.mfa.am E-Mail: armgermanyembassy@mfa.am